


Մարդու իրավունքների
վիճակը Հայաստանի
Հանրապետությունում
COVID-19 համավարակի
կանխման նպատակով
սահմանված արտակարգ
դրության պայմաններում

(16.03.2020 թ.-ից մինչև
16.05.2020 թ.-ը ժամանակահատված)



ԶԵԿՈՒՅՑ

մաս 3

Խոշտանգումների կամ անմարդկային կամ
նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու
բացարձակ իրավունքի խախտումների
դեպքերը մտահոգիչ են



Norwegian
Helsinki Committee

ԿԱՆԱԶՈՐ
2020



Ձեկույցը պատրաստվել է «Ոստիկանության հետ հարաբերություններում քաղաքացիների իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից՝ Նորվեգիայի Հելսինկյան կոմիտեի ֆինանսական աջակցությամբ:

Ձեկույցում հնչած կարծիքները ՀՔԱ Վանաձորի գրասենյակինն են, եւ հնարավոր է չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

16.03.2020 թ. ՀՀ Կառավարությունը նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածումը կանխելու նպատակով N 298-Ն որոշմամբ ՀՀ ամբողջ տարածքում մեկամսյա ժամկետով հայտարարեց արտակարգ դրություն: Հաշվի առնելով նոր կորոնավիրուսային հիվանդության տարածման ցուցանիշները՝ ՀՀ Կառավարության որոշմամբ արտակարգ դրության ժամկետը երկարաձգվել է մինչև 13.06.2020 թվականը:

16.03.2020 թ.-ից մինչև 16.05.2020 թ.-ը ժամանակահատվածում ուստիկանության աշխատակիցների կողմից արժանապատվությունը նվաստացնելու, ֆիզիկական և հոգեբանական բռնությունների, խոշտանգման դեպքերով կազմակերպություն են դիմել թվով 8 քաղաքացիներ:

1. Մասնավորապես՝ վերոնշյալ քաղաքացիներից մեկը՝ Մ.Հ.-ը, 07.04.2020 թ. հայտնել է, որ նույն օրը ուստիկանության աշխատակիցները, կանգնեցնելով իր ավտոմեքենան, պահանջել են ցույց տալ տեղաշարժման թերթիկը և անձը հաստատող փաստաթուղթը, և այն չներկայացնելու համար ուստիկանության աշխատակիցները սկսել են հայհոյել իրեն, որի պատճառով վիճաբանություն է սկսվել, և դեպքի վայր են ժամանել մի խումբ ուստիկաններ, ովքեր սկսել են բռնություն գործադրել իր, եղբոր և տարեց հոր նկատմամբ: Դեպքի առթիվ հաղորդում ենք ներկայացրել, որի հիման վրա ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քրեական գործ է հարուցվել:

2. Մեկ այլ դեպքով քաղաքացի Գ.Մ.-ը 03.04.2020 թ.-ին դիմել էր ՀՔԱՎ և պնդում էր, որ 28.03.2020 թ.-ին ուստիկանները, ունենալով լարված հարաբերություններ իր հետ և օգտվելով արտակարգ դրության պայմաններից, իրեն թույլ չեն տվել գնալ խանութ և սկսել են հարվածել իրեն, նույնիսկ կոտրել են իր ավտոմեքենայի դուռը և իրեն ապօրինի բերման են ենթարկել ուստիկանության բաժին, որտեղ շարունակել են իրեն ենթարկել հոգեբանական ճնշման, ինչի արդյունքում իր ինքնազգացողությունը վատացել է:

3. Մեկ այլ դեպքում ուստիկանության աշխատակիցների վարքագծից տուժած ամուսիններ Շ.Մ.-ը և Ա.Մ.-ը 20.03.2020 թ. դիմել են Կազմակերպություն և հայտնել, որ 20.03.2020 թ. ուստիկանության աշխատակիցը իրենց կանչել է ուստիկանություն՝ բացատրություն տալու համար, և երբ իրենք քննադատաբար են վերաբերել արտակարգ դրության պայմաններում ուստիկանության տվյալ բաժնի գործողություններին, ուստիկանության տվյալ բաժնի մի շարք պաշտոնյաներ սկսել են ամուսիններին հարվածել, հրել, զցել գետնին և դրսևորել են անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք:

4. Մեկ այլ քաղաքացի Ս.Ս.-ը իր դիմումում 28.03.2020 թ.-ին հայտնել է, որ 25.03.2020 թ.-ին իր ամուսնու մայրը որդու հետ կապված քրեական գործի շրջանակներում այցելել է ՀՀ գլխավոր դատախազություն, որտեղ որոշակի անհասկանալի խնդիրների առաջացման պատճառով վիրավորել են 57-ամյա կնոջը և տեղափոխել են ոստիկանության բաժին, որտեղ ապօրինի պահել են ավելի քան 8 ժամ և անհասկանալի պատճառներով նրան տեղափոխել են հոգեբուժարան: Ահազանգող քաղաքացու և տուժածի պնդմամբ՝ ոստիկանները անմարդկային վերաբերմունք են ցուցաբերել 57-ամյա տուժած կնոջ նկատմամբ:

5. Մեկ այլ դեպքում 26.03.2020 թ.Կազմակերպություն դիմած քաղաքացի Ս. Ե.-ն պնդում է, որ 21.03.2020 թ. սխալ կայանելու համար ոստիկանների կողմից ապօրինի բերման է ենթարկել և ոստիկանության բաժանմունքում գտնվելու ժամանակահատվածում զրկված է եղել զանգելու, պաշտպան ունենալու իրավունքներից և ամբողջ ժամանակահատվածում ոստիկանների կողմից ենթարկվել է խոշտանգման, մասնավորապես՝ ֆիզիկական և հոգեբանական բռնությունների:

6. 23.04.2020 թ.-ին Ա.Ս.-ն Կազմակերպությանը տեղեկացրել է, որ 20.04.2020-ին իրեն բերման են ենթարկել ՀՀ քրեական ոստիկանության գլխավոր վարչություն, և այնտեղ իր կողմից չկատարված հանցագործությունը ընդունելու համար հարվածել են իրեն «... ջրի շշով, տաբուրետկայով, և ծեծելով ստիպել են ընդունել իր մեղքը», ինչի արդյունքում քաղաքացին ձեռք է բերել առողջական լուրջ խնդիրներ:

7. 31.03.2020 թ.-ին Գ.Կ.-ը Կազմակերպությանը հայտնել է, որ 24.03.2020-ից Ստեփանավանի բաժնի ոստիկանությունը մշտապես հետապնդում է իրեն, և արտակարգ դրության ընթացքը նույնպես բացառություն չի եղել: Հիվանդանոցից դուրս գրվելուց հետո ծանր առողջական վիճակով Ստեփանավան գնալու ճանապարհին ոստիկանության աշխատակիցների պահանջած տեղաշարժման թերթիկը չունենալու պատճառով նրան տեղափոխել են բաժին, այնտեղ մի խումբ ոստիկաններով ենթարկել ֆիզիկական և հոգեբանական բռնության, այնուհետև կայացրել վերջինիս 250 հազար դրամ տուգանելու վարչական ակտ:

8. 07.05.2020-ին Կազմակերպություն դիմած քաղաքացի Ա.Զ.-ը հայտնել է, որ 28.03.2020-ին իր ամուսնուն շուրջ մեկ ամիս առաջ բերման են ենթարկել ՀՀ ոստիկանության Բազումի բաժին, այնտեղ ենթարկել ֆիզիկական բռնության՝ «...ծեծել, խփել գլխին, վնասել աչքը, կոտրել կողոսկրերը և պահանջել ընդունել մեղքը», որից հետո

ամուսնուն տեղափոխել են ՀՀ ԱՆ «Վանաձոր» ՔԿՀ, որտեղ վերջինս գտնվում է խիստ ծանր վիճակում, ունի մշտական ցավեր, որոնցից ուշագնաց է լինում, իսկ օրական մի քանի անգամ իրականացվող սրսկումները որևէ արդյունք չեն տալիս:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասին համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է:

ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

ՀՀ քրեական օրենսգրքի 309.1 հոդվածի 1-ին մասի համաձայն. «Պաշտոնատար անձի կամ պետական մարմնի անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձի կողմից կամ նրա դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ որևէ անձի դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը՝ այդ կամ երրորդ անձից տեղեկություն կամ խոստովանություն ստանալու նպատակով կամ այն արարքի համար պատժելու նպատակով, որն այդ կամ երրորդ անձը կատարել է կամ որի կատարման մեջ կասկածվում կամ մեղադրվում է, ինչպես նաև այդ կամ երրորդ անձին վախեցնելու կամ որևէ արարք կատարելուն կամ կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով առավելագույնը երեք տարի ժամկետով»:

Նույն հոդվածի 2-րդ մասը նախատեսում է տվյալ հանցագործության ծանրացուցիչ հանգամանքները, մասնավորապես՝ 2-րդ մասի 1-ին կետով ծանրացուցիչ հանգանք է նախատեսում նույն արարքը երկու կամ ավելի անձանց նկատմամբ կատարելը, իսկ 4-րդ կետով՝ մի խումբ անձանց կողմից այդ հանցաքը կատարելը:

Պետք է վերստին արձանագրել, որ խոշտանգումներից, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքը մարդու բացարձակ իրավունքն է, որը չի կարող սահմանափակվել ոչ մի հանգամանքով, այդ թվում՝ արտակարգ կամ պատերազմական դրության պայմաններում:

Կազմակերպություն ղիմած վերոնշյալ քաղաքացիների ենթադրյալ խոշտանգումները տեղի են ունեցել հենց ՀՀ ոստիկանության պաշտոնատար անձանց կողմից: Այսինքն՝ վերոնշյալ դեպքերում ենթադրյալ խոշտանգում կատարած անձինք, լինելով ոստիկանության պաշտոնատար անձինք, հանդիսանում են վերոնշյալ հանցագործության հատուկ սուբյեկտներ: Ոստիկանության աշխատակիցները մի

շարք դեպքերում անձանց ենթարկել են և՛ ֆիզիկական, և՛ հոգեբանական տառապանքների: Մանավորապես՝ մի շարք դեպքերում քաղաքացիներին ֆիզիկական ուժեղ ցավ են պատճառել, որի հետևանքով անձանց շտապ բժշկական օգնություն է անհրաժեշտ եղել, իսկ մի քանի այլ դեպքերում անձինք ոստիկանության բաժանմունքներում այնպիսի անմարդկային և բարոյահոգեբանական տառապանքի են ենթարկվել, որ նրանց ինքնազգացողությունը նույնիսկ վատացել է: Ոստիկանության պաշտոնատար անձինք փորձել են քաղաքացիներին վախեցնելու միջոցով հետ պահել իրենց ապօրինի գործողությունների վերաբերյալ բողոքներ ներկայացնելուց, իսկ մի քանի այլ դեպքերում էլ, օգտվելով արտակարգ դրության պայմաններից, և ելնելով իրենց տրամադրված լայն լիազորություններից՝ փորձել են անհամաչափ պատիժ կիրառել անձանց նկատմամբ, որը զուգորդվել է խոշտանգմամբ:

Ամփոփելով արտակարգ դրության պայմաններում ոստիկանության գործողությունները՝ մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների համատեքստում՝ հստակ պետք է արձանագրվի, որ ոստիկանության որոշ պաշտոնատար անձիք, հստակ չտիրապետելով իրենց լիազորությունների սահմաններին և չգիտակցելով, որ ոստիկանության համակարգի **գերակա առաքելությունը անձանց իրավունքների պահպանությունն է** (առավել ևս արտակարգ դրության պայմաններում), դուրս են եկել իրենց լիազորությունների շրջանակներից և ոտնահարելով անձանց հիմնարար իրավունքները՝ ֆիզիկական կամ հոգեբանական բռնության են ենթարկել անձանց՝ դրանով էլ ավելի վատթարացնելով անձանց՝ արտակարգ դրության պայմաններից ելնելով ստեղծված՝ արդեն իսկ ծանր վիճակը:

Գտնում ենք, որ ոստիկանության նման գործելաոճը անթույլատրելի է, և ավելին՝ պետությունը պետք է ձեռնարկի բոլոր միջոցառումները, որպեսզի բացառի ոստիկանության պաշտոնատար անձանց՝ մինչ այսօր դրսևորած վարքագիծը, քանի որ կորոնավիրուսի տարածման նման ցուցանիշների պահպանման դեպքում դեռևս պարզ չէ, թե որքան ժամանակ կշարունակվի արտակարգ դրության ռեժիմը, և ոստիկանության աշխատակիցները պետք է անհապաղ դադարեցնեն նշված վարքագիծը, գործելաոճը և դադարեցնեն անձանց նկատմամբ բռնություններն ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը:

Արտակարգ դրության ժամանակահատվածում իրավապահ մարմինների առանձնահատուկ դերն ու առաքելությունը ավելի են մեծացնում ոստիկանության յուրաքանչյուր աշխատակցի պատասխանատվությունը՝ մարդու իրավունքների նկատմամբ հարգալից վերաբերմունք դրսևորելու տեսակետից:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ արտակարգ դրության ժամանակ ոստիկանության աշխատակիցների կողմից մարդկանց խոշտանգման դեպքերի քանակը գերակշռում է արտակարգ դրությանը նախորդած վերջին մեկ տարվա ընթացքում գրանցված դեպքերի քանակին:

Այսպիսով՝ պետք է արձանագրենք, որ ոստիկանության շարքերում աշխատող որոշ պաշտոնատար անձիք, օգտվելով արտակարգ դրության պայմաններում օբյեկտիվ պատճառներով ոստիկանության լիազորությունների շրջանակի ընդլայնման հանգամանքից և չդիմանալով իրենց տրված **«նոր գործիքակազմի գայթակղությանը»**, չարաշահում են լիազորությունների ընձեռված լայն շրջանակը, որը դրսևորվում է մարդու իրավունքների կոպտագույն խախտումներով: Նման գործելակերպի շարունակման դեպքում ՀՀ ոստիկանությունը կարճ ժամանակում կարող է կորցնել հեղափոխությունից հետո ձեռք բերված հանրային վստահության մակարդակը:

ՀՀ ոստիկանության ղեկավարությունը մշտական հսկողություն պետք է իրականացնի, անհրաժեշտ ցուցումներն ու վերապատրաստումները պետք է իրականացնի ոստիկանության աշխատակիցների համար՝ արտակարգ դրության պայմաններում քաղաքացիների հետ հարաբերվելիս մարդու իրավունքների նկատմամբ հարգալից վերաբերմունքի սկզբունքներով ղեկավարվելու մոտեցումների, կարողությունների զարգացման ուղղությամբ: